ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 հունվարի 2023 թվականի N 29 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի N 1661-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 11-րդ կետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքում գտնվող որոշ տարածքների նկատմամբ հանրության գերակա շահ ճանաչելու մասին» N 1661-Ա որոշման (այսուհետ՝ որոշում) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆԱԻՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՈՐՈՇ ՀՈՂԱՄԱՍԵՐ «ՄԱՅԼԵՌ ՄԱՈՒՆԹԱՅՆ ՌԵՋՈՐԹ» ՓԱԿ

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ»:

2. Որոշման նախաբանը «61-րդ հոդվածով,» բառերից հետո լրացնել «66-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 11-րդ կետերով,» բառերով:

3. Որոշման 1-ին կետում «(կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի միավորների)» բառերը փոխարինել «(կադաստրային ծածկագրերով անշարժ գույքի միավորների՝ բացառությամբ պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի միավորների)» բառերով:

4. Որոշման 1-ին կետից հետո որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին, 1.2-րդ, 1.3-րդ և 1.4-րդ կետերով.

«1.1. Հիմք ընդունելով, որ ծրագրի իրականացման տարածքը ներառում է նաև պետական սեփականություն հանդիսացող հողամասեր, ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում սույն որոշման NN 2 և 3 հավելվածներով սահմանված՝ պետական սեփականություն հանդիսացող՝ 253.56 հա մակերեսով հողամասերն ուղղակի վաճառքի ձևով «Մայլեռ Մաունթայն Ռեզորթ» փակ բաժնետիրական ընկերությանն օտարելուն՝ որոշումն ուժի մեջ մտնելու պահին գործող տվյալ նպատակային նշանակության հողամասերի կադաստրային արժեքներով:

1.2. Հիմք ընդունելով, որ ծրագրի իրականացման տարածքը ներառում է նաև պետական սեփականություն հանդիսացող հողամասեր, ծրագրի արդյունավետ իրականացման նպատակով համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում գտնվող՝ սույն որոշման N 4 հավելվածի 1-14-րդ տեղամասերով նախատեսված՝ պետական սեփականության հանդիսացող՝ 1.19518 հա մակերեսով հողամասերը, որտեղ տեղակայվելու են ճոպանուղիների ենթակառուցվածքները՝ ներառյալ կոմերցիոն օգտագործման օբյեկտները (ռեստորան և այլն), ուղղակի վաճառքի ձևով ընկերությանն օտարելուն՝ օտարման պահին գործող տվյալ նպատակային նշանակության հողամասերի կադաստրային արժեքներով:

1.3. Հիմք ընդունելով, որ ծրագրի իրականացման տարածքը ներառում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող հողամասեր, ծրագրի արդյունավետ

իրականացման նպատակով համաձայնություն տալ կառուցապատման համար նախատեսվող՝ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարան համայնքի տարածքում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող՝ 0.04269 հա, N 4 հավելվածի 16-րդ տեղամասով նախատեսված հողամասը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նաիրի համայնքի տարածքում գտնվող՝ համայնքային սեփականության հանդիսացող՝ 0.40552 հա, N 4 հավելվածի 15-րդ տեղամասով նախատեսված հողամասը, որտեղ տեղակայվելու են ճոպանուղիների ենթակառուցվածքները՝ ներառյալ կոմերցիոն օգտագործման օբյեկտները (ռեստորան և այլն), ուղղակի վաճառքի ձևով ընկերությանն օտարելուն՝ օտարման պահին գործող տվյալ նպատակային նշանակության հողամասերի կադաստրային արժեքներով:

1.4. Սահմանել, որ սույն որոշման N 4 հավելվածով նախատեսված հողամասերի ուղղակի վաճառքն իրականացվելու է դրանց նպատակային նշանակությունն անտառային և արոտավայրի նշանակություններից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխան նպատակային նշանակության փոփոխության դեպքում:»:

5. Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում՝

1) «գերակա շահ» բառերից հետո լրացնել «և այն հողամասերի ցանկը և սխեման, որոնք, համաձայն սույն որոշման 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերի, համաձայնություն է տրվել ուղղակի վաճառքի ձևով օտարելուն» բառերով.

2) «NN 1 և 2» բառերը փոխարինել «NN 1, 2 և 3» բառերով:

6. Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը «տարածքների» բառից հետո լրացնել «, որոնց նկատմամբ ճանաչվել է հանրության գերակա շահ,» բառերով:

7. Որոշման 4-րդ կետում «NN 1 և 2» բառերը փոխարինել «NN 1, 2 և 3» բառերով:

8. Որոշման 5-րդ կետի առաջին պարբերությունում «Ապարան համայնքի ղեկավարին» բառերը փոխարինել «Ապարան համայնքի և Նաիրի համայնքի ղեկավարներին» բառերով:

9. Որոշման 5-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ, 2.1-ին և 2.2-րդ ենթակետերով.

«2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ընկերության հետ կնքել սույն որոշման 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերում նշված հողամասերն ընկերությանն ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ համապատասխան պայմանագրեր.

2.1) սույն որոշման 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերում նշված հողամասերը 3 (երեք) տարվա ընթացքում նպատակային նշանակությամբ չօգտագործվելու դեպքում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն սույն որոշման 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ՝ լուծելով սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված՝ ընկերության հետ կնքված պայմանագրերը և ապահովելով հողամասերի վերադարձը համայնքին և պետությանը՝ ներառյալ բարելավումները.

2.2) սահմանել, որ սույն որոշման 5-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմանագրերի նոտարական ձևակերպման, հողամասերի նկատմամբ իրավունքի փոխանցման պետական գրանցման հետ կապված ծախսերն իրականացվելու են ընկերության միջոցների հաշվին։»։

10. Որոշումը 5-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5.1-ին կետով.

«5.1. Հաստատել սույն որոշման 1.1-ին, 1.2-րդ և 1.3-րդ կետերում նշված հողամասերի ուղղակի վաճառքի ձևով օտարման գործարքի հիմնական պայմանները՝ համաձայն N 5 հավելվածի։»։

11. Որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի։

12. Որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի։

13. Որոշումը լրացնել նոր՝ N 3 հավելվածով՝ համաձայն N 3 հավելվածի։

14. Որոշումը լրացնել նոր՝ N 4 հավելվածով՝ համաձայն N 4 հավելվածի։

15. Որոշումը լրացնել նոր՝ N 5 հավելվածով՝ համաձայն N 5 հավելվածի։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

05.01.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ